ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/272

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի տնօրեն Դ. Հովհաննիսյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 264.110.1041779),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.10.2021թ. թիվ 26/26-1/17336-2021 գրությամբ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի 15.10.2021թ. թիվ ԳԵ/9453-2021 գրության հիման վրա, 22.10.2021թ. թիվ 26/26-1/17336-2021 գրությամբ նախաձեռնել է «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/272 ընթացակարգի շրջանակներում 27.10.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել իր մասնակցությունը, ով հայտնել է, որ «ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին որևէ ծանուցում չի ստացվել:

3. <u>ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կադաստրի կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.10.2021թ. թիվ ԳԵ/9453-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ Կադաստրի կոմիտեի կարիքների համար պահնորդային ծառայությունների ձեռքբերման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ին, անգործության ավարտից հետո՝ սեպտեմբերի 30-ին, ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ, ինչպես նաև վերջինս տեղեկացվել է, որ պայմանագիր կնքելու ծանուցումը ստանալուն հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր է ներկայացնել կնքվելիք թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03 գնման պայմանագրի ապահովում (տուժանքի տեսքով)՝ պայմանագրի արժեքի տասը տոկոսի՝ 13,44,000 (մեկ միլիոն երեք հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամի չափով, և որակի ապահովում պայմանագրի արժեքի տասնհինգ տոկոսի չափով՝ 2,016,000 (երկու միլիոն տասնվեց հազար) ՀՀ դրամի չափով (տուժանքի տեսքով), սակայն վերջինս չի կատարել պահանջը:

Արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշել է հաղթող ճանաչել և պայմանագիր կնքելու առաջարկ ուղարկել 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցին՝ «Ռեդ Նեթ» ՍՊԸ-ին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն չի դիտարկվում որպես ընտրված մասնակից»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/272 ընթացակարգի շրջանակներում 27.10.2021թ. ժամը 09:35-ին և 29.10.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/272 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/272 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից հայտարարվել է «ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն:
2. ՀՀ կադաստրի կոմիտեն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետի դրույթով, 15.10.2021թ. թիվ ԳԵ/9453-2021 գրությամբ լիազորված մարմին է ներկայացրել Ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3.1 արձանագրությունը և Ընթացակարգի քարտուղարի կողմից պայմանագիր կնքելու առաջարկի վերաբերյալ Ընկերությանն ուղղված գրությունը:
3. Պատվիրատուի կողմից չի ներկայացվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը՝ պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը Ընկերությանը ծանուցած լինելու փաստը հավաստող ապացույցը:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.10.2021թ. թիվ 26/26-1/17336-2021 գրությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի 15.10.2021թ. թիվ ԳԵ/9453-2021 գրությունը և գործով առկա նյութերը հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի

6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ***<u>պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին</u>***՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի

ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 9.2-9.5-րդ կետերի համաձայն՝

9.2 Սույն հրավերի 1-ին մասի 8.25 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն հրավերի 1-ին մասի 8.25 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

9.3 Ընտրված մասնակցին ***<u>պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:</u>***

9.4 Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

9.5 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով

նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում ***պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով***, ***գրավոր ուղարկում է լիազորված մարմին***, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպես, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից հայտարարվել է «ԿԿ-ԳՀԾՁԲ-22/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ն:

ՀՀ կադաստրի կոմիտեն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետի դրույթով, 15.10.2021թ. թիվ ԳԵ/9453-2021 գրությամբ լիազորված մարմին է ներկայացրել Ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3.1 արձանագրությունը և Ընթացակարգի քարտուղարի կողմից պայմանագիր կնքելու առաջարկի վերաբերյալ Ընկերությանն ուղղված գրությունը:

Պատվիրատուի կողմից չի ներկայացվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը՝ պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը Ընկերությանը ծանուցած լինելու փաստը հավաստող ապացույցը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործով առկա նյութերը, արձանագրում եմ, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը, որով կապացուցվեր Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը Ընկերությանը ծանուցած լինելը, Պատվիրատուի կողմից չի ներկայացվել:

Մինչդեռ Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով պետք է ներկայացներ Ընկերության տվյալները՝ **համապատասխան հիմքերով**: Տվյալ դեպքում որպես հիմք հանդիսանում է Ընկերությանը՝ Օրենքի և

Ընթացակարգի հրավերի համապատասխան գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից պայմանագիր կնքելու առաջարկի և պայմանագրի նախագծի վերաբերյալ ծանուցում ուղարկելը, այսինքն՝ Ընկերության կողմից Ընթացակարգի շրջանակներում պատշաճ ծանուցված լինելը, քանի որ ծանուցումն ուղարկելուց հետո է միայն հոսում 10 աշխատանքային օր ժամկետը, որը և չպահպանելու դեպքում մասնակիցը համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, որի արդյունքում ի հայտ է գալիս Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջը:

Նշվածի արդյունքում արձանագրում եմ, որ սույն ընթացակարգի նախաձեռնման նպատակով Պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու առաջարկի և պայմանագրի նախագծի վերաբերյալ Ընկերությանը պատշաճ ծանուցած լինելու փաստը չներկայացնելու հետևանքով վիճելի է մնացել դրա գոյության փաստը:

Վերոգրյալի արդյունքում գտնում եմ, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի բացակայության պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.10.2021թ. թիվ 26/26-1/17336-2021 գրությամբ «Քինգ Մարշալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**